

ՊԱՏԱՆՈՐԻՒԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար 12 Ժր.
Տարեկան 6
Վեցամսեայ 15
Սրսասահմանի համար տարեկան 8

Սանկիայի համար 3
Տարեկան 4.50
Վեցամսեայ 8

Մանուգրան տղր սուս քին երեսին համար 40 ս.
Իսկ վերջին երեսին համար 20 սանկիա է. երե
հին անցի անգամներու համար 20 0/0 գեղջ կըլ
լայ:

Վառնայի համար մ.ո.հ. 40 սանկիա

ՀԱՐԻ

ՈՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՈՒՄԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՄՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԻՒ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՐՆԵՐԸ

Նամակ և զրամ զրկե
խմբագրութեան հաս.
ցիին .

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արսասահմանի համար
մեո.հ.
( 20 ՍԱՆԻՒՄ )
Պուշկարիոյ համար
մեո.հ.
( 15 ՍԱՆԻՒՄ )

Գրութիւնք և՛ չեն տրուիր

«ՇԱՐՋՈՒՄ»Ի ԲԱՏԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏՆԵԳԻՆԸ ՊԷՏԻ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԱՍԵՐԻԿԵԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Վերջերս՝ շատ մը հայեր, Եւրոպայի և այս երկրի մէջ, քաղաքական դաւադրութիւններու զոհ գացին: Այս արդիւնքն էր ժամանակին հնչակեան անունը կրող կուսակցութեան մը ներքին երկպառակտումներուն, որոնք 1896ին ծագում առած են: Կուսակցութիւնը արդէն վաղուց դադարած է Հայաստանի ազատագրումի գործին մէջ առաջնորդող դեր մը խաղալ:

Կարգ մը փառամոլ անհատներու համաձայնութեամբ՝ յիմար գրիթաութեան մը ոգով գործուած այս ոճիւնները՝ հասարակութեան մտքին մէջ թիրիմացութիւն պատճառած են և այսպիսի կարծիքներու տեղի տուած են, որոնք ձեռքի տակ գտնուող իրողութիւններու հետ անհայտելի են, և որոնք չեն կրնար ոչ հայ անունին պատիւ ընել և ոչ ալ հայ ժողովուրդին դատին նըպաստել:

Յառաջ նկատեցինք որ ամերիկեան լրագրութեան մէկ մասը, հայկ. խնդիրներու մասին իր ըմբռնումները շատ թերի տեղեկութեան մը վրայ հիմնելով՝ ազգային նկարագիր մը տուած է այս ոճիւններուն, որոնց համար ոչ հայ ժողովուրդը՝ ընդհանուր առումով և ոչ ալ անորազատութեան պայքարին մէջ գործուն կերպով աշխատողները պատասխանատու են: Չանոնք այդպիսի սխալ գոյնի մը տակ ներկայացնել արդարացի բան մը չէ:

Այս եղանակները մի քանի սկզբունքէ զուրկ անհասանելի գործն է:

Որպէս զի խնդիրը իւր ճշմարիտ գոյնովը ներկայացուի՝ Ամերիկայի մէջ գտնուող կեդրոնական կոմիտէս ինքզինքը պարտաւոր կըլլայ՝ ամերիկեան թերթերու մէջ բացատրութիւն մը հըրատարակել, յայտարարելով:

Թէ հայ յեղափոխական Իսչակցութիւնը, որ Հայաստանի մէջ եղող ներքին կազմակերպութեան հետ նոյնն է, և որ Եւրոպայի մէջ խորհրդարանական շրջաններու վստահութիւնը կը վայելէ:

Այս կազմակերպութիւնը, որ վերջին տարիներս հայկական խնդիրը Եւրոպայի մէջ քաղաքականօրէն յուզելու գործին մէջ զօրաւոր և առաջնորդող ազդակ մը եղած է —, հանդիսագէտ և խստիւ կերպով կը դատապարտէ ըստ իւր սկզբունքի այդպիսի բուռն և եղբայրասպան ոճիւնները:

Յուսով ենք՝ այս կազմակերպութիւնը որ անգույ մայր երկրին աշատումին կաշխատի՝ պիտի շարունակէ վայելելու քաղաքակրթեալ աշխարհին վստահութիւնը, բարի կամեցողութիւնը և օժանդակութիւնը ինչպատ նահատակ ժողովրդեան մը, որ խաւարչուտ Արեւելքի մէջ՝ դարեւոր հարստահարութեանց տակ՝ անվթար պահած է իւր քրիստոնեայ հաւատքը և իր ազգայնութիւնը և որ հիմա ձայն կը բարձրացնէ և կը մաքառի մարդկային տարրական իրաւունքներուն համար:

Հայ. Յեղ. Իսչակցութեան Ամերիկայի Կեդր. Կոմիտէ

ՌՈՒԷԷՆ ԾԵՆՄԱՆԵԱՆ (ԲԵՌԻ)

Բնիկ երզնկացի էր Բեռլին: Կը պատկանէր Շիշմանեան բարեկեցիկ ընտանիքին, ու իր բուն անունն էր Ռուբէն: Ուսում առած ըէ Երզնկայի Ազգային կեդրոնական վարժարանին մէջ: Կը վարէր իր եղբոր Գրիգորի հետ, վանահայրութիւնը Սուրբ Մեծ-Լուսաւորիչ վանքին, Սեպուհ լեռան կողքերուն վրայ կառուցուած: Յեղափոխութեան կարապետներէն եղած էր իր չրջանին մէջ, ու նախքան հայրուկապետ դառնալը, մասնակցած էր Գալուստ Արխանեանի խմբին: Այս վերջինին իր ընկերներով ձերբակալուելէն առաջ, Բեռլին երզնկայի կեդրոնական կոմիտէի

աջակցութեամբ, կազմակերպելու ձեռնարկած էր արդէն նոր հայրուկախումբ մը, որ ան ու սարսափ ձեռքով, կոտորածներէն առաջ, հայ հարստահարող թիրք ու քիւրդ պէյերու վրայ ու իր հովանին ստրածեց կոտորածներու պահուն, հայ զիւղերու և բնակչութիւններու վրայ, որոնք կը գտնուէին Քէմալի ու Տէրսիմի սահմաններուն մէջ:

Կոտորածներու երկունքի թւականներն էին: Թիրք բռնակալութեան կամայական խժոճութեանց ենթարկուած Հայաստանը անի ու սարսափի մէջ կը գալարուէր: Յեղափոխական քարոզչութիւնը, նպաստաւորուած Սասունի մէջ կատարուող վայրագութեանց ու օրուան դժոխակ իրականութիւնները դարձող կախաղաններու մղձաւանջէն, հայ հայրուկին սիրաւ ալ աւելի կարեւորուէր ու զայն վրէժխնդրութեան անսանձելի զգացումովը կը բորբոքէր: Իւրաքանչիւր վայրկեան սրտակեղիք ու սանձակեցուցիչ անակնաժը մը կը կայծակէր հայութեան գլխին ու մահու և կենաց տաղանակ կուրուականեր անոր շփոթ գոյութեան մէջ:

Երզնկա ու իր շրջակայ հայաբնակ գիւղերն եւս միեւնոյն ճգնաժամը կանցընէին: Բթառիճ գիւղին մէջ օր ցերեկով կառեւանգուէր ու կը բռնաբարուէր 15 տարեկան կոյս աղջիկ մը՝ վայրտ պէյ կոչուած ճիմինցի թիրք սրիկայէ մը, ու քաղաքին մէջ, Հայոց եկեղեցիներու հրապարակին վրայ, հայ երիտասարդ մը կը սպաննուէր քիւրդ փայտավաճառէ մը, ու թէ պէյ և թէ քիւրդ անպատիվ կը մնան: Այս վերջի դէպքը կը պատահէր 1895 օգոստոս 12-ին (ն. տ.) կիրակի օր մը:

Քեռի կիմանայ այդ վերջին վայրագութեան լուրը ու առիթը այլեւս եկած կը համարէ վրէժխնդրութեան դաս մը տալ Երզնկայի վայրենի կառավարութեան: Իմանալով որ թիրք քայմաքամ մը Բէմախէն Երզնկա պիտի ճամբորդէ չորս զինուորի և հայ անասնաբուծի մը, Պոզոս Տատեանի (Գօլ-Աղասի) ընկերակցութեամբ՝ իր 17 հոգիէ բաղկացած խմբով կը փութայ անմիջապէս Երզնկա տանող Քէմալի կիրճը կտրել, ուր յաջորդ օրը կեռեւիկ կառավարական այդ ճամբորդները:

Երոշակո (Շարունակելի)

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԹԱՒԻԻՉՑՅՈՒՆԵՐԻՆ

Հայութեան ներկայ բնական վիճակում փրկութեան միակ յոյսը մնացել է յեղափոխութեան վրայ. դուք շատերդ այս բանին համոզուած էք. միայն վստասիրտ և էգօբատ մարդիկ այդ համոզմունքը չունին, որոնց մէջ պէտք է հաշուենք նաեւ Եղիշէն: Դուք նրա հակափոխական քարոզները շատ էք լսել. բայց գուցէ չէք լսել որ Ատրպատականի Հ. Յ. Իսչակցութեան կենտրոնական կոմիտէն պաշտօնական հրոթեամբ Եղիշէնի զգուշացրեց գրական յեղափոխական քարոզներ չը տալ:

Յիշում էք անշուշտ Պետրոսի դէպքը, որ Եղիշէն խուռն բազմութեան առաջ նրա իսկական անունը տալով մատնեց և Պետրոս ստիպուած եղաւ սրահից դուրս գալ Եղիշէի երեսին ասելով. — «Ուրեմն, թո՛ղ տե՛ք ձեր ճակտին մատնիչ անունը դրօշմելո՛ւ»:

Եղիշէն այս դէպքերից կատաղած ու կեց վրէժ լուծել Իսչակցականներից. նրանց թաւրիղից հեռացնել աշխատելով և իր կատաղութեան ամբողջ թոյնը Լիլուայի ուսուցչական խմբի վրայ թափեց:

Եղիշէն իր ստորութեան և փոքրոգութեան ապացոյցը տեց նաեւ ժողովրդի կողմից ընտրուած պատգամաւոր Պ. Մկրտումին սպարանից հեռացնելով, որովհետեւ Եղիշէի կեղծ խաբբայ և հանրալիսս գործերի դէմ բողոքել էր. նոյն պատճառով Աղայ Չաքարիայից խնդրեց որ Պ. Յովսէփին գործից հեռացնէ:

Ահա մի մարդ, որ չը կարողանալով իր հակառակորդների հետ ազնիւ և օրինաւոր միջոցներով կոխ մղել, գձուճ և ստոր միջոցներէ զիմուճ, ջանալով նրանց անձնապէս վնասել և հայ շահելու միջոցներից զրկել... Այդ մարդը, հասարակական գործը կապում է անձնականի հետ. նա իր եւն է նկատի ունենում և միմիայն իր եսին գոհացում տալ է աշխատում, ոտնակոխ տալով հասարակական և անհատների շահերը:

Եւ ի լրումն այս ասէնքի, Եղիշէն եկեղեցապատկան կալուածների գըրաւման խնդրում իր ծայրայեղ ուսամոլութիւնն ցոյց տեց, կաթողիկոսն բողոք ուղարկել պահանջողներից երեսին պոռաւով. — Ռուսական կառավարութեան չը պէտք է հակառակել. ցարի հրամաններին պէտք է հնազանդիքս: Եղիշէն այս խօսքերը արտասանելու ամօթ չզգաց մի այնպիսի մօժէնաւում, որ

Կովկասում հայ ժողովուրդը այդ-  
խնդրի առիթով իր արևուն էր թա-  
փում :

Բոլոր այս դէպքերը և իրողու-  
թիւնները բացարձակապէս ցոյց են  
տալիս, որ Նիդէրլանդները և Կարող  
օգտա-  
կար լինել Ատրպատականի թեմում,  
ընդհանրապէս փնտրակար է լինում:  
Իսկ թաւրիզիները, որ Ատրպա-  
տականի հայութեան գործուն ոյժն էք  
ներկայացնում, բարոյական մեծ  
պարտականութիւն ունինք ձեր վրայ,  
որ առաջ թաւրիզի հեռացնել եղի-  
չէին, քանի որ դեռ աւելի մեծ  
փնտրակար գործերի չէ ձեռնարկել և  
մեղիք չէ տուել աւելի սաստիկ եղ-  
բայրասպան կռիւների: Նրա բռնած  
ընթացքը հետեւանքը շատ վատ է  
երեւում:

Մի անգամ եւս կրկնում եմ. կու-  
սակցական և անձնական նեղ հայիւ-  
նեցիք դրեւած չէ, որ առաջարկում  
եմ ձեզ այդ քանը. դուք խղճով կը  
վկայէք, որ Նիդէրլանդներ անձնական  
ոչինչ ունին. ընդհանրապէս մինչեւ  
վերջը բարեկամ եմ մնացել և իմ բա-  
րեկամական խորհուրդները տուել և  
զգուշացրել եմ. բայց հասարակա-  
կան շահը եւ միշտ բարձր եմ գտնել  
բոլոր շահերից: Կուսակցական նկա-  
տումներ էլ չեմ ունեցել, որովհետեւ  
եթէ այդ նկատումները ունենայի,  
Լիւսապոլ երկսեռ զարոցներու հոգա-  
բարձութեան նախագահութիւնից ճը-  
րաժարելուց և թաւրիզից հեռանա-  
լուց առաջ ուսուցչական խումբին օ-  
րինաւոր իրաւունքով կը վարձէի և  
նոյն իսկ առանց հրաժարելու թաւ-  
րիզից կը հեռանայի:

Ուրեմն, իմ միակ նպատակը, մը-  
տածումը և հոգն է եղել հասարակու-  
թեան օգուտն. յոյս ունիմ որ դուք  
էլ առանց կուսակցական և անձնա-  
կան նեղ հաշիւներից առաջնորդե-  
լու, միմիայն ժողովրդի և մատաղ  
սերունդի օգուտը և շահը նկատի  
ունենալով, շուտով կը հեռացնէք  
թաւրիզից բունակալ, փոքրզի, ա-  
նազնիւ, էջմիս, ստախոս և անար-  
ժան Նիդէրլանդները:

Վերջին խրատս լինի — մի՛ խա-  
ւէք Նիդէրլանդներին քաւառաւոր-  
ներին:

Բաւական է որքան խաւեցինք,  
ես իմ ասելիքը ասացի. մեղքը  
ձեր վրայ:

Դովս. Կ. Փոլշանան — Խան  
30 Սեպտ. 1903  
Սալմախ

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Նկուէ (Ամերիկայ) 4 Նոյ.

Հնչակեան երկու հատուածներ  
ըր, որ գեռ երէկ միութիւն բա-  
նով գինովցած էին, բայց ա-  
ռանց անոր նշանակութիւնը հաս-  
կնալու, այսօր սկսած են իրար ա-  
տել, ի՞նչ որքէն աւելի զիրար ա-  
տել և «քրդական թաշիբայակու-  
նութեամբ» իրարմէ վրէժ լու-  
ծել:

Ապացոյց Սաղունիի սպանութեմը  
... Խեղճ միութիւն, ի՛նչ կորս-  
տաբեր չարիքներ չզործուցան  
քու անունովդ, այն ալ այնպիսի  
վայրկեանի մը, որ Ռուսահայաս-  
տան և Տանկահայաստան ճգ-

նաժամային տաղնայի մը մէջ կը  
գտնուին:

Հոկտ. 14 ձ/7էն ի վեր ամե-  
րիկեան թերթերը ուրիշ բանով  
չ'են զբաղուած, եթէ ոչ հայու-  
թիւնով և հայութեան երեսին  
այնպիսի ամօթալի բռն մը կը  
նետեն, որ մարդ ամօթ կըզգայ  
նոյնիսկ զանոնք յիշատակել:  
Հայ յեղափոխութիւնը կը նը-  
մանցնեն Իրախոյ մէջ գոյու-  
թիւն ունեցած Մաֆիական  
խմբակին:

Դեհ հիմա «Բրո Արմէնիա» և  
«Հայաստանի բարեկամներ» ա-  
նունով վերջերս կազմուած ըն-  
կերութիւնը թող գործնին կոտ-  
րեն գրեթէ ու համոզեն թէ ա-  
տոնք մէկ երկու եղբայրասպան  
դաւաճաններ են, թէ հայ յեղա-  
փոխութիւնն ատոնցմով կազմուած  
չէ միայն, թէ անիկայ իր մէջ  
ունի մաքուր և անկեղծ տարրեր,  
որոնք իրենց լինման կը ճան-  
չնան. Երևալդի կարմիր Սուլ-  
թանը, միայն և միայն անոր  
հետ է որ կուզեն կուրի: Բայց  
որո՞ւ պիտի կրնան հասկցնել թէ  
այդպէս է, չե՞րիք է որ անոնք  
այդ գաղափարը կազմած են:

Ու դեռ հնչակեան պարոնները  
երես ալ ունին իրենց թերթե-  
րու միջոցաւ ըսելու թէ, իրենք  
ո՛ր և է լուր չունին, թէ անձնա-  
կան կըքի արդիւնք է միայն:

Ահա «Ձայն Հայրենաց» որ  
վրէժ, վրէժ գոչելով Սապահ-  
Գիւլեանի սպանման փորձը ընել  
տուաւ ու յետոյ պատասխանատու-  
ութիւնը մէկ մարդու վրայ  
ձգեց: Նոյնպէս հին հնչակեան-  
ներուն «Կերածնութիւնը» ու-  
րացաւ Ռուսիոյ մէջ կատարուած  
սպանութիւնները: Մեզի համար  
զարմանալին այն է, որ հայ ժո-  
ղովրդին մէջ դեռ կը գտնուին  
մարդիկ, որոնք այս ամէնը գիտ-  
նալով հանդերձ դեռ կը զիջա-  
նին այս արդի մարդիկը իսկա-  
կան յեղափոխական — Դաշնակ-  
ցականներուն հետ բաղդատու-  
թեան զնել ու ամօթ ալ չզգալ:  
Կազմակերպութիւն մը, որ իր  
ձեռք օրէն սկսեալ միշտ հաւա-  
տարիմ գտնուեցաւ իր զձեռք ձը-  
րագրին, ու 13 տարի է ի վեր  
անխախտ կեցած է իր ուղղու-  
թեան վրայ առանց խոչնդոտ-  
նիբու առջեւ ընկրկելու, միշտ  
գիտցաւ պարագային համեմատ  
զործելու եղանակը որոշել: Ահա  
կազմակերպութիւն մը, որ իր  
գոյութեան ընթացքում տեղի չը-  
տուաւ ու է բաժանման: Այս ա-  
մէնը կուգո՞ն ապացուցանել, որ  
Հ. Յ. Դաշնակցութեան մէջ կայ  
միութիւն և կենդանի գործ,  
ու եմն անոր թող պատկանի մեր  
սիրտն ու մեր աջակցութիւնը...  
Եր. Պոյաճեան

Սօֆիստի «Օտէսա» սրահին մէջ,  
հայերու ներկայութեամբ բանա-  
խօսեց Տ. Հրահատ Կամարակա-  
նը: Ընթացքը կրակոտ խօսքե-  
րով բացատրեց յեղափոխութեան  
ծագման գլխաւոր պատճառները:  
Միայն թէ կիրքէ մղուած, Հնչ-  
կուսակցութիւնը այնքան բար-  
ձրացուց, որ կարծես թէ եղ-  
բայրասպանները և կամ 25 հա-  
զար տուարները իզուր վատնու-  
նեց ասոնք չըլլային: Եւ վերջե-  
րը անկեղծութեան տակ թագ-  
նուած կեղծիքը տեսնելով մենք  
շատ անգամ յուսախաբ եղանք:  
Ասոր ապացոյցը տուին տեղիս  
Հնչակեանները, որոնց քով երկ-  
պառակութեան և խառնակու-  
թեան արդիւնքներէն զատ ոչինչ  
չի տեսնուած: Վերջերս երբ կը  
բողոքուէր քեմալիստի մը տաճ-  
կամուտութեան դէմ, Հնչակեան-  
ները ամէն կերպով պաշտպան  
հանդիսագան և լսելու դժբաղ-  
դութիւնն ունեցանք, թէ որո-  
շած են յօդուածագրի դիակը  
փողոցները ձգել և երկրի մէջ  
անոր աունն ու տեղը այրել տալ  
քիւրտերու միջոցաւ: Աւրիշ մի-  
ջողդէպ մը. միթէ՞ անկեղծու-  
թիւն է հացագործէն հաց շառ-  
նել անոր Դաշնակցական ըլլա-  
լուն համար: Կը հարցնեմ ձեզ.  
միթէ Դաշնակցութիւնը և Հնչ-  
ակեանութիւնը իրարմէ զատ  
հայրենիքներ կուզեն ստեղծել,  
միթէ մեր նպատակը չէ՞ Հայաս-  
տանը վերականգնել: Ուրեմն  
ի՞նչ տեղի կայ թշնամանալ Դաշ-  
նակցականներու հետ. ինչու՞  
անվերջ կռիւներ յարուցանել:  
Եթէ բարեկամներ չենք կրնար  
ըլլալ, գոնէ թշնամիներ ալ չըլ-  
լանք. գործենք վեհանաճար,  
գործենք գիտակցօրէն, իսկ ե-  
թէ դուք այս դերը չէք կարող  
ի գլուխ հանել, գոնէ չէզոքա-  
ցէք և ձգեցէք մարդորսորդու-  
թիւնը, որուն պայտազանդ ա-  
նունը կուտաք:

Կոնակ

### ՄԱՌԻ—ԺԱՆԻ

ՆԵՐԿԱՅՑՈՒՄԻ ԱՌԻԻԻ

Հարեւանցի ակնարկ մը միայն կու-  
զեմ նետել, եւ ոչ թէ մաս առ մաս  
քննադատութեան ենթարկել վերո-  
յիշեալ ներկայացումը իւր բոլոր  
փութիւնով մէջ, գոր հասարակութեան  
հրահրելու յանդիմութիւնն է ունե-  
ցած «Նառնէթտա» թատերախումբը:  
Այսու եւ շուրիմ վարագրեալ դի-  
տաւորութիւններ արձանագրելով, դի-  
տաւորութիւն ջլատելու խումբը, ալ  
ընդհակառակը կը փափաքի որ նա  
միշտ աննկուն կուրի իւր պատկա-  
նած գործը յատալ մղելու եւ բարձ-  
րանալու. չուայուած չորսքորթու-  
թիւնները չեն որ Նառնէթտայի փը-  
շալից ճամբան կը յարգարեն, Պ. Պա-

պեանը, իմբին վերաստուելը, գի-  
տէ այդ անշուշտ:

Ճշմարիտ ըսելու համար, շատ թոյլ  
էր Տիկին Յակոբեանը իւր ստանձ-  
նած Մառի-Ժան դերին մէջ, միջակ  
ըլլալէ ալ պակաս բան մը, նա չը  
գիտցաւ ցոլացնել ճշմարիտ թշուա-  
մօր մը եւ տարաբաղբ ամուսնոյ մը  
զգացումները, միայն կծկուելով չէ  
որ այդ ցաւերը կարթայստուին:

Տիկին Յակոբեան բարձր բովան-  
դակ իմաստով, չէր կրցած ըմբռնել  
իւր ներկայացումը դերին ոգին, եւ  
կամ չուներ այն յատկութիւնը բնա-  
ծին պարզութեան մէջ ցոլացնել վե-  
սեմը: Մառի-Ժան աղբարակու մը  
չէ, այլ իւր սրտի ցաւի գայարու-  
նեցում մէջ տանջուող ոգին, եւ պատ-  
րաստ մինչեւ վերջ մղելու կուր սի-  
րասուն զակին համար: Մառի-Ժան  
պահ մը կը կարծէ թէ երջանկացած  
է, երբ Սոֆին իրեն կը յանձնէ ու-  
կիով լի քսակը. հոս նա բոլորովին  
ինկաւ, չկրցաւ ոչ մէկ կերպով ար-  
տայայտել մօր մը երանաւէտ երջան-  
կութիւնը, սրուած պարզութեան  
տակ ընկճուած ոգին, բոլորովին  
անբնական շարժումներ, միշտ կրկ-  
նուած, միշտ նկուն, որ այդպէս չէ,  
իսկ այն պահուն երբ կը վերադառ-  
նայ ընկերիկ տղոց ապաստանարա-  
նէն յուսակուտը. լեղապատառ, նա  
անցաւ գրեթէ աննշմարելի, այս  
կենսաբէ մահու անցքը միացման գը-  
ծին մէջ իւր մահու շափ սրտին ցաւը,  
տանջուող էութիւնը իտեա բերելու  
ըմբռնումը իսկ ունենալ չգիտցաւ  
զէթ ուկիով լի քսակը նետելով Սո-  
ֆիի երեսն ի վար:

Յու ու կսկիծ, յոյս եւ երջան-  
կութիւն Տիկ. Յակոբեանի համար  
մի եւ նոյն զգացումներն են, միեւ-  
նոյն լեզուն ունին, միայն անգոյն,  
միշտ շարայար, նա չգիտցաւ տալ  
իւր բերնէն արտաբերած խօսքերուն  
այն երկէջը, այն վտաճեցումը զոր  
կը պահանջէին այն երկու հակոտն-  
եայ զգացումները. Տիկինը չգիտե՞ր  
միթէ՞ թէ ցաւը եւ երջանկութիւնը  
տարբեր լեզուներ ունին:

Պ. Պապեան իւր ստանձնած  
Պերթրանի դերին մէջ քիչ թէ շատ  
յաջողակ էր, սակայն նա ալ իւր  
դերը չէր ըմբռնած եւ կամ խաղալու  
տրամադրութիւն կը պակսէր իրեն  
երէկ գիշեր, որովհետեւ թոյլ էր:  
Պերթրան կը սիրէ Մառի-Ժանը,  
սակայն գինեմուտութիւնը, շարին ու  
բարիի անգիտակցութիւնը մտաւցու-  
մի կուտայ իւր սրտին այն փափուկ  
զգացումը, եւ այդ անցքը ա՛յ այդ  
անցքերը միշտ թոյլ, բայց այսու-  
նա գիտցաւ քիչ թէ շատ բարձր պա-  
հել ինքզինքը հանդէպ Տիկ. Յակոբ-  
եանի. Պ. Պապեանը թերեւս կրց  
Մառի-Ժանի ազգեցու թիւնը որ իւր  
արտայայտած տափակ զգացումներով  
միշտ զէպի թոյլը քաղելու հետա-  
մուտ, կաշկանդուած, չթոյլատրեց  
երբէք արձուի իմիշտ:

Պ. Երամանը Բէմի դերին մէջ  
անցաւ միջակ, թէեւ նա ըմբռնած  
էր անոր ոգին:  
Կո դեմ բառ մըն ալ ըսել օր. վե-  
հանուշի մասին, Սոֆիի դերին մէջ,  
անա միակ յաջողակ զէմքը ներկա-  
յացումի դերակատարներու մէջ. նա  
գիտցաւ պահել զինքը միջակ բարձ-  
րութեան մը վրայ, իրեն արտաբ-

(\*) Բայց այդ եթէ պակաս մըն է,  
հեղինակին է եւ ոչ թէ դերասանու  
հիին:

Մ. Ս.

րած զգացումները պարզ էին եւ սրբա-  
տալիր. վերջին արարուածին մէջ նա  
ամենէն ալ աւելի բարձր գտնուեցաւ.

որքեկորոյս մօր մը սրտի ցաւէն,  
ոստելով երջանիկ, փոքրիկ հրեշ-  
տակիկներէ եւ սրտախց ամուսինէ մը  
չրջապատուելու յոյսին, եւ Օրիորդին  
առ թէօղալտ ուղղած հայեացքը ա-  
մէն բան էր:

Թէ օրիորդը ո՛ւր դարձնէ ուղղելու  
իւր շարժումը ճշւեր, նիստ ու կացը,  
եւ կորսվիլով մնալէ սեփարանի վը-  
րայ գաղթի, աշխատութիւնը եւ յա-  
րատուութիւնը կրնան զինքը օր մը  
պակել:

Գիտողութիւններս ներկայացնելով  
ես կը փափաքէի որ Պ. Պապանանը  
չալունակէ մեզ հրամանել համով-հո-  
տով ու բարոյայից տրամներ, միայն  
կուզէի զգուշացնել Յարգոյ Պարոնը,  
որ առկէց յետոյ արուելիք ներկայա-  
ցումներ, չը շափէր իւր վրայ, այլ  
առնէր ինկատի եւ զինքը չըջակա-  
տող զերակատարներ, եւ ես հաւաս-  
տի եմ թէ նա այդպէս աւելի հաստա-  
տուն հիմերու վրայ կը կերտէ իւր  
գործը եւ կը հասնի իւր բարձրագոյն  
բարձրութեան:

Անուշաւան  
Վառնա 7 նոյ. 903

ԱՐՔԱՍԵՆ ԶԲՈՒՆՈՒՄ

Վաղը, հինգշաբթի գիշեր,  
Պապանան թատերախումբը պի-  
տի տայ իր երկրորդ լուրջ ներ-  
կայացումը, Հիւկօյի «Արքայն  
զբօսուած» Արդէն ան մէկ ան-  
գամ ներկայացուած է նոյն խմ-  
բին կողմէ, առանց յայտնու-  
թեան, ինչ որ արդիւնքն էր  
դերերուն և խաղին կնճառտ,  
խորին հոգեբանութեան շատ  
թերի, շատ հարեւանցի ըմբռ-  
նուելուն: Այս անգամ աւելի հա-  
ւանականութիւն կայ յաջողու-  
թեան, վասնզի, հարկաւ դերա-

ՓՇԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

(17)

ՆՈՒՆԵՐ Ս. Զ. — ԻՆ

ԳՂՈՒՆ Գ.

— Թողէք, թողէք, էլ չեմ ուզում  
ձեզ լսել, տեղիք վեր թռչելով ընդ-  
միջնց նատէժտա Պետրովնան: Մնաք  
բարեաւ:

Պետրովնա բարկացած օրիորդի առ-  
ջեւը կտրելով և մի քիչ կատակով  
կերպարանք աննելով միջամտեց.

— Նատէժտա Պետրովնա, կատար-  
եալ մանուկ էք դարձել. ինչպէս ե-  
րևում է, Արչակի որոշումը ձեզ վրա  
շատ խիստ է ազդել, այդ ազդումի  
տակ չէի կարող ձեզ զսպել: Որչափ  
յիշում եմ՝ դուք միշտ համակրու-  
թեամբ էք վերաբերվել թէ զէպի հայ  
ցեղը և թէ զէպի հայրական շար-  
ժումները, եւ եթէ չէք սխալվում,  
Արչակին համակրել էք հէնց նրա հա-  
մար, որ նա ձեզ ներկայանում էր  
իբր անզուսպ և մեծ գործերի ընդու-  
նակ հայ յեղափոխական, միայն հա-  
մեմված արդի ընկերական վարդա-  
պետութիւններով: Այսօր երբ Արչա-  
կը գործնականի է ուզում վերածել  
այն ինչ որ խօսում էր, դուք ինք-

սանները՝ իրենց դերերուն հո-  
գիւն և մանրամասնութեանը  
աւելի տիրացած՝ գիտակցաբար  
պիտի կատարեն զանոնք, և յե-  
տոյ նախորդ ներկայացմանց մէջ  
իրենց դերերուն տկար կողմերը  
ըմբռնած ըլլալով՝ անշուշտ շար-  
տի ուզեն կրկին զանոնք:

Վերջապէս քեզեցիկ երեւոյթ  
է որ մեր դերասանները ամէնա-  
բարձր տիպարներ և ամէնագե-  
ղեցիկ յուզումներ հանդիսա-  
գրեն մեր անշուք բեմին վրայ,  
ու ճիշտ ասոր համար է որ թատ-  
րոնի սիրահար հասարակութեան  
համար գրեթէ պարտականու-  
թիւն մըն է անհրաժեշտ քաջա-  
լերը տալ իր դերասաններուն:

«ԲԱՆԲԵՐ»

Վեցամսեայ հանդէս՝ Գրական  
և Գեղարուեստական, հրատարա-  
կութիւն Ա. Մելիքեան ի Բե-  
զերսպուրկ:

ԳՈՐԾԱՅԻՆ

Ռուսմանիոյ, Պուլկարիոյ և ար-  
տասահմանի ամէն երկիրներու  
համար:

ԳՍՈՆԻԿ Գ. ՄԱԶՄԱՆԵԱՆ-ՐՈՒՍՉՈՒՔ  
Այս գրական և գեղարուեստա-  
կան հանդէսին՝ որուն Ա. հատ-  
րը լայն տեսած է արդէն՝ մաքուր  
տպագրութեամբ, գեղարուես-  
տական ընտիր նկարներով և շա-  
հեկան պարունակութեամբ՝ կար-  
ժէ որ ամէն գրասէր հայ բաժա-  
նորդագրուի, որով իր գրագա-  
րանին մէջ կունենայ միշտ՝ թէ  
ընթերցումի յարմար ու օգտա-  
կար գիրք մը և թէ միանգա-  
մայն գեղարուեստական գործ մը:  
Տարեգինն է 12 ֆր. իսկ իւ-

րաքանչիւր գիրք առանձին կար-  
ժէ 7 ֆր.

ԳՍՈՆԻԿ Գ. ՄԱԶՄԱՆԵԱՆ-ՐՈՒՍՉՈՒՔ  
Բացի «Բանբեր» գործակալն  
է նաեւ «Մուրճ»-ի, «Հանդէս  
ամօրեայի» և այլ հայերէն և  
Ֆրանսերէն թերթերու, որոնց  
տարեգիններու վճարումին հա-  
մար գիւրուածներ կուտայ ա-  
մէն անոնց, որ այդ գիւրու-  
թիւններու պէտքն ունին:

ԳՍՈՆԻԿ Գ. ՄԱԶՄԱՆԵԱՆ-ՐՈՒՍՉՈՒՔ

Կը վաւթայ ծանուցանել նաեւ  
թէ՛ ինք միակ անձն է, որ լուս-  
չուքի մէջ, մասնագիտօրէն կը զ-  
բաղի քաղքի գործերու տպագ-  
րութեամբ, (ծանուցագիր, շը-  
ջաբեական, նամակագրութիւն,  
փոխանակագիր, առեւտրական տոմ-  
սեր, այլաքարդ, հարսնիքի և  
ծնունդի հրատարակութիւն, մահազ-  
եւայլն) որոնց մաքուր, գեղե-  
ցիկ ու ճաշկատոր տպագրու-  
թեանը համար վերջերս ունեցած  
է տպագրական նորութիւններ՝  
բոլորովին նորաձաշակ և քսա-  
ներորդ դարու մարդկային մտ-  
քի արտադրութիւններուն էն  
գեղեցիկներէն, ու հետզհետէ  
ալ ունենալու վրայ է:

Բացի քաղքի գործերէ կը տը-  
պագրէ նաեւ գրքեր, հանդէս-  
ներ՝ նախանձելի մաքուրութեամբ  
ու անմրցելի գիններով:

Գիտութիւնը ժողովրդակա-  
նացնող և օգտակար հեղինակու-  
թիւններու և թարգմանութիւն-  
ներու հրատարակութեանը հա-  
մար մասնաւոր գիւրուածներ  
կընծայէ ու կը տարածէ զանոնք:

նում ես որ խեղճ աղջիկը վատ տրա-  
մագրութեան մէջ է Արչակի որոշու-  
մի պատճառով: Նա այստեղ եկել էր՝  
իրբեւ ընկերներ, բարեկամներ մօտ  
միութարական խօսք լսելու: Դու  
ընդհակառակը կրակի վրա իւղ լցրի:  
Նկատեց Պետրովնա:

— Թո՛ղ Աստուած սիրես. վատ տը-  
րամագրութիւնը չի կարող մարդ-  
կանց ստիպել վիրաւորական խօսքեր  
ուղղել մի ամբողջ ցեղի հասցիին:  
Մեղքը մեր երիտասարդներինն է.  
հնում են, գալիս այդ ստիպել են կպ-  
չում... կարծես չեմ ճանաչում. սօ-  
ցիալիստ են, կոսմօգօրիտ են, մինչև  
որ մէկին կը ճանկեն: Գրանից յետոյ  
աւելի մոլի Ռուս են դառնում քան  
կատկօլը և Պրեքտօնօսցէլը: Գանի՛սն  
եմ տեսել...

Սյո ինժինէր Մարկոսեանի կի-  
նը, անտառապետ Գրիգորովի կինը,  
դեռ չամուսնացած հայրութեան հա-  
մար հոգի էին տալիս. բայց հէնց որ  
ամուսնացան՝ հայ ընկերների սօքը  
տներին կտրել աւել: Եւ դեռ քանի՛-  
սը այդպէս: Երեխաները մի քան հա-  
յերէն չը գիտեն. երբ որ նկատու-  
ես, մայրերը պատասխանում են.  
«Հայերէնը նրանց ինչի՛ն պէտք է,  
նրանք Ռուսներ են»:

Եւ այդպիսի սխալ կերպով կազմ-  
ված ընտանիքները խրատական օրի-  
նակ էլ չեն լինում մեր երիտանորդ-  
ների համար... Թոյլ ենք, թոյլ  
Յեղահին այրածնապատութիւնը, որը  
ազգերին կորստից փրկելու ամենա-  
կարեւոր ֆակտորներէն մէկն է, մեր  
մէջ գոյութիւն չունի:

ԱՍԿԻ ԱՆԿԻ

Երկրէր գրած է «Չանգակի  
երգը»: Համբաւաւոր գրագետ  
Մը օր մը կանգ կառնէ Երկրէրի  
արձանի առջեւ. վեր կը նայի ու  
կը բացագանչէ. «Օ՛, մեծդ  
Գէօթէ... և կըսկսի արտասանել  
«Չանգակի Երգ»-ի առաջին տու-  
նը. «Յիէսպ կէմաուրտ ին տէն  
էրտէն, շիթէթ տի ֆօրմ Աուս  
Լէհմ կէպարանդ...»

Գերման գրագետին համբաւին  
արժանի սօցիալիստ մըն ալ ծը-  
նած է այսօր՝ մեր մէջ—«Կերա-  
ծնութիւն»-ի Անդրէաս Յակոբա-  
նը, որ հազիւ թէ կարգացած  
ըլլայ և ան ալ իհարկ է առանց  
հասկնալու—կարլ Մակսէն քա-  
նի մը գլուխներ և իմացած Լիպ-  
կնէխտի կամ Բէրնշտայնի ա-  
նունները՝ ելելու ալ ու ձախ հայ  
կանանց մէջ սօցիալիզմ կը քա-  
րողէ և գոհ է տեսնելով յաջող  
արդիւնք... իր երազին ու երե-  
ւակայութեան մէջ:

Վա՛յ այն սօցիալիզմին, որու  
առաքեալները վաղուան իմաս-  
տակներն են...

Իսխ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Հայկ. Վրէժխնդրութիւն»  
վերնագրին տակ Վրէժնայի  
«Յայթ» թերթը հրատարակած է  
հետեւեալ հեռագիրները:

«Գալիցիին վրայ եղած սպան-  
նութեան փորձը հայ յիղափո-  
խականներու գործն է, որոնք  
կուզէին եկեղեց. կալուածներու  
գրաւման համար վրէժ լուծել:  
Յեղափոխականները մահուան

ված ընտանիքները խրատական օրի-  
նակ էլ չեն լինում մեր երիտանորդ-  
ների համար... Թոյլ ենք, թոյլ  
Յեղահին այրածնապատութիւնը, որը  
ազգերին կորստից փրկելու ամենա-  
կարեւոր ֆակտորներէն մէկն է, մեր  
մէջ գոյութիւն չունի:

Գեռ տարրական քաղաքակրթու-  
թիւնից զուրկ ձեւանում էք ընկե-  
րային ամենալայն և ամենաբարդ  
տէօրանները իւրացնողներ... Ներկա-  
յանում ենք էվօլյուցօնիստներ և մի  
ոստիւնով ուզում ենք դարերի ըն-  
թացքում տեղի ունեցած քաղաքա-  
կրթութիւնը ցատկել... Հայը, վայ-  
րի վերոյ քաղաքակրթեամբ ժամանա-  
կակից հայը, միայն ընդունակ է  
քաղաքակրթութեան մէջ այդպիսի  
գերմարդկային և անբնական սո-  
սիալներ անող ձեւանալ: Ընչու է,  
ուրիշ՝ մեր վիճակում գտնվող ժողո-  
վուրդների մէջ էլ այդ տեսակ երեւ-  
ոյթներ տեղի են ունենում, բայց ոչ  
մեր չափով: Մեր կողմից այդ վնաս-  
ակար երեւոյթի զէմ մաքառելու չը-  
չոյն անգամ չէ նկատվում. իսկ  
այդ շատ վատ նշան է. ընդվելու,  
ձուլվելու նշան...

(Շարունակելի)

պատվով վճարած հին նաեւ ուրիշ 30 առաւ պաշտօնեաներու հաժար օր

Ոչ միայն մէջ սպաննուեցաւ Գաւիթ Վլիգ. Ը. Ահարեկիչները ազատ են օ

—Սագունիին և իր ընկերներուն սպաննուած թաղին բնակիչները անգլիական կառավարութեան գրութիւն մը ուղղելով բողոքած են կատարուած սարսափներու դէմ և պահանջած որ յեղափոխական այդ անհանգիստ տարրը ու անոնց կեպրոնը արտաքսուին Լօնտօնէն օ

Չարագործութեանց հեղինակներուն երեսը ճերմակ օ

—Անցեալ կիրակի ընտրուեցաւ Վառնայի ազգ. վարժարաններուն համար Հոգաբարձութիւն օ Յաւալի է մեզ արձանագրել, որ ընտրութեան մասնակցած են միայն քանի մը անձինք օ Գարոցիին պէս սրբազան հաստատութեան մը հանդէպ այսքան անտարբերութիւն որդեսպանութեան հաւասար ոճի մըն է օ Ինչպէս հայ երեխաներ, ո՞վ պիտի հոգայ ձեզ համար օ

—Պուլկարական թերթերը մասնաւոր ուշադրութիւն դարձուցին Ներսէս եպս. Ասլանեանի Պուլկարահայոց առաջնորդ ընտրուելուն վրայ և ծանուցին, որ Պատրիարքարանը հաստատած է կատարուած ընտրութիւնը օ Ծանկալի էր որ այս մասին հայերու կողմէ պուլկարական մամուլին արուէր ընդարձակ տեղեկութիւններ օ

—Ալեքսանդրապօլի Հայոց եկեղեցական կառուածներու արձանագրութիւնն ալ կատարուած է օ կնքուած է զանձարանը օ

—Վաճառական մը 2000 ֆր. նուիրեր է Շապին—Գարպահայութի վարժարաններուն օ

Տօրչէսթրէն (Ամերիկա) հայ վաճառականներ 400 ֆր. զրկած են Վանի կեդրոնական վարժարանին ի նպաստ օ

Պուլկարահայ վաճառականներուն ականջը խօսի օ

—Ռուս կառավարութիւնը նրպաստներ կուտայ Պարսկահայ դպրոցներուն, պայմանաւ, որ ռուսերէն լեզուն պարտաւորիչ ըլլայ օ Որքան խորհուրդ. կուտայինք Պարսկահայոց կարմիր արջին նպաստները իր երեսին նետել և ռուսերէն լեզուն արտաքսել իրենց դպրոցներէն օ

— Իզմիրեանց գրական մրցաբաշխութեան յանձնաժողովը կը յայտարարէ հայկաբանութեան վերաբերեալ նիւթի մինչև 1905 փետրուարի վերջը իրեն զրկել օ

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չօրավար Մարինով նորէն պաշտօնի կանչուեցաւ և իրեն յանձնուեցաւ չօրաբանակի մը հրամանատարութիւնը օ Մարինով ցոյց տուած է ընդունակութիւններ և Սերպիոյ դէմ պատերազմէն յետոյ մտած է սպայաբունդին մէջ, բայց 1896ին իրեն նշանակուած է հանգստութեւն առճիկ, թէեւ ինք 40 տարեկան էր օ Պատճառը Պաթթիւնայէրկի գահակցութեան առթիւ Ռուսիա ապաստանող և յետոյ վերադարձող սպաներու Մարինովի պաշտօնանկ ըլլալը պահանջելն էր օ Բեթրով՝ այն ատենը պատերազմական նախարար՝ տեղի տուաւ օ հիմա նա քաւեց իր մեղքը օ

—Պուլկարիոյ Վիէննայի նախկին գործակատար Տօք. Բոյյանովի 15 տարեկան տղան Մակեդոնիա երթալով խումբետու մէջ մտած էր օ Մերունի հայրը՝ ինք ալ ի ծննդենէ մակեդոնացի մը, լուր առած է թէ որդին թիւրքերու դէմ կուտելով ինկած է օ

Հանգիստ փոքրիկ նահատակին ոսկորներուն օ

—Իշխանը հրամաններ արձակած է Մակեդոնիոյ համար օգնութեան յանձնարումներ կազմել օ Սուլթանը ի հարկէ պիտի վերադարձի իշխանի այս քայլէն, բայց իշխանը եթէ չուզէր ալ ուրիշ տեսակ չէր կրնար ընել օ

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Իուր 10,000 զօրք զրկած է Եմէնէն ապստամբ արապները զսպելու համար օ

—Տամատ Մահմուտ փաշայի որդին իշխան Լուիֆուլահ ձայտեալ կերպով Պօլիո մտած ըլլալով ճանչցուած և ձերբակալուած է օ Իշխանը յայտնած է որ քաղաքական նպատակներով չէ եկած, այլ եկած է անձնական գործեր կարգադրելու օ

—Ամերիկեան գեսպանը պահանջած է Բ. Դուէն, որ Պէյրութի ամերիկեան գեսպանին վրայ յարձակում գործող յանցաւորները պատժուին օ Պահանջած է նաեւ պաշտօնանկ ընել Պրուսայի վալին Բէշիտ պէլը, որ մասնաճեղքութիւն ունեցած է յարձակման մէջ և անոր ի վարձատրութիւն Պրուսա փոխադրուած օ

—Միւրցլթէկի ծրագրին մասին խորհելու համար Սուլթանը նախար. ժողով գումարեց նպարդոսը քաջախերուած ուրիշներէն առաջարկած է ծրագրի ընդունիլ առանց պետութեանց կողմէ զինեալ միջամտութեան մը տեղի տալու, ինչ որ հաւանական է,

եթէ ծրագրի միւրսուր օ Սուլթանը և իրեն շոյոքորթներու խումբը մերժեցին, եպարդոսը ներկայացուց իր հրամարակունը, Սուլթանը չընդունեց և գեսպաններուն իմացուց, որ եթէ եւրոպական հսկողութեան վերաբերեալ կէտերը չիչեն ինք ծրագրի պիտի ընդունի օ

Կարմիր գազանը ահա նորէն սկսած է իր նենգ խաղերը օ

—Կաշխատուի Ալպանիոյ ալատութեան համար գործող յեղափական մարմինները միացնել օ «Ալպանիոյ անկախութեան համար միջազգային կոմիտէն» հիմա գազանի ժողովներ ունի բուն Ալպանիոյ հիւսիսային կողմը, կայ նաեւ Աթէնքի մէջ կամիտէ մը, որ կուզէ Ալպանիան Յունաստանի հետ միացնել օ Ներքին կազմակերպութիւնը այս մտքին հակառակ է օ Ալպանական յեղ. յանձնախումբեր կամուած են Պօլիս, Սէլանիկ, փոքր-Ասիա, Եգիպտոս և Կիւտէ օ

—Սուլթանը կատաղած է իմանալով որ հակառակ իր ատուած խիստ հրամաններուն և տրամադրած մեծ գումարներուն՝ Պօրիս Սարաֆով յաղողած է Պուլկարիա վերադառնալ, հրամայեց սահմանը հսկող սպաները պատժի ենթարկել օ

#### ՌՈՒՍԻԱ

Ռուս թերթի մը Լօնտօնի թղթակիցը կը հաղորդէ, որ Անգլիա լրջօրէն խորհուրդ տուած է ձառնիայի որ Ռուսիոյ դէմ պատերազմ չը հրատարակէ և խնդրին խաղաղ լուծում մը տայ օ

—Ռուսուովի Բարիզէն Հռովմ փոխադրուելու պատճառը անոր Բոմպի քաղաքականութեան դէմ գործելը եղած է օ Նեխիտով Հռովմի գեսպանը կարգուած է Բարիզի գեսպան օ

—Բէթերսպուրկէն «Բէօլ» Յայր. րին կը հեռագրեն օ

«Սօցիալ յեղափոխական կուսակցութիւնը վերջին շարժ. ներս ցոյց տուաւ եռանդուն գործունէութիւն և ցրուեց մեծաքանակ թուացիկ թերթեր օ

Նոր եկող ճամբորդներու վրայ ոստիկանութեան բանեցուցած խիստ միջոցները, շարձանագրուած մարդիկ հետապնդելը կապացուցանեն, որ արտասահմանէն ներս մտած են յեղափոխականներ օ ամէն գիշեր կրկան խուզարկութիւններ, ձերբակալուած են կասկածելի մարդիկ օ

—Ռուսական գծի մը վրայ անձանթ մարդիկ կրակ ձգած են թղթատար գնացքի մը մէջ և զոյցած են 7 միլիօն ռուբլի օ Ստակի մէկ մասը կերթար ներքին գործոց նախարարին, միւս մասը սղգօ պանքին օ

#### ՍԵՐՊԻԱ

Պէլկրատի մէջ գումարուեցաւ մ ձ ժողով մը Մակեդոնիա օգնութիւն զրկելու համար օ Ներկայ էին թագաւորը և իր ընտանիքը օ

#### ԻՏԱԼԻԱ

#### Ա Ի Ս Տ Ր Ի Ա

Ուսուցչուհիներու պիտանութեան դէմ օրէնք մը քուէարկուած է օ Պրիւնի մէջ ուսուցչուհիները մեծ միջոցով մը գումարելով մեծամասնութեան որոշումով ընդունեցին այդ օրէնքը օ

#### ՉՈՒՒՑԵՐԻԱ

Փընէվէն արտաքսուած են 17 խաչացի բանտրներ վերջին գործադուլի առթիւ եղած խրառովութեանց մասնակցելուն և անիշխանական գաղափարներ յայտնելուն համար օ Անոնք ուզեր են կողոպուտի ենթարկել սեղանաւորներու խանութները և պանքերը օ

#### ՅՐԱՆՍԱ

Հումպէրթի խնդիրը նորէն կը զբաղեցնէ հրապարակը օ Այս անգամ Թիկարօ կը յայտարարէ, որ Հումպէրթի հետ յարաբերութիւն են ունեցեր քաղաքական ասպարէզի մէջ գործող Բարգիկ, որոնց հետ նաեւ Լուպէ օ

#### ԿՍՐԵՆՈՐ ԱԶԻ

Ճամբորդներու Համար

Նախկին Օթէլ Ռոստօփի և այս ամառ Հիսարի մէջ Օթէլ Պուլկարիա վարձակալ Աստիկ Սրապիան, այժմ բացած է պանդոկ մը Թիկարի Մեծ փողոցին վրայ օ

#### ՕԹԷԼ ՍԱՆԹՐԱԼ

Անուամբ Երանոսեանները գոհ պիտի մնան մաքրութենէն և արագ ծառայութենէն օ

#### Տնօրէն

Աստիկ Սրապիան

6 Նոյեմբեր, 1903

Յիւլիպէ 1—12

#### Է. ԱԿՆՈՒՆԻ

Կովկասեան Վէրքեր

Փընէվ

Հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան օ

Դինն է 3 ֆրանք օ

Ստանալու համար դիմել «Գրքոշակ» խմբագրութեան օ

#### ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна